/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Գ. Գևորգյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Շվեյցարիա / Նյուշատել / 13.05 - 17.05.2019թ.

- **Նպատակը**

ա. Արևելյան Եվրոպայի, Կովկասյան և Կենտրոնական Ասիայի երկրների մասնագետների կարողությունների զարգացման աշխատաժողով՝ կազմակերպված «Վիճակագրություն և տվյալներ» ծրագրի շրջանակում.

բ. «Գենդերային վիճակագրություն» խորագրով աշխատանքային նստաշրջան՝ կազմակերպված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ), ՄԱԿ-ի Կանանց և Շվեյցարիայի ֆեդերալ վիճակագրական գրասենյակի հետ համատեղ:

- **Քննարկված թեմաները**

Երկօրյա աշխատաժողովի ծրագրի շրջանակում ներկայացվել են հետևյալ թեմաները.

1. Կայուն զարգացման 2030թ. օրակարգի իրականացումը գենդերային հեռանկարների տեսանկյունից.

1.1. ԿԶՆ 5.5.1(b) ցուցանիշը. նպատակը, հիմնավորումը և հաշվվման մեթոդաբանությունը.

2. Հաղորդակցությունը գենդերային վիճակագրության շրջանակում.

3. Գենդերային վիճակագրության կիրառումը քաղաքականության մշակման և մշտադիտարկման մեջ. ՄԱԿ-ի ԵՏՀ աշխատանքային խմբի ներկայացրած օրինակները.

4. Տնտեսական իրավունքների և հնարավորությունների հզորացումը և տնային տնտեսութ-յուններում որոշումների կայացման լիազորությունների բաշխումը.

5. Գենդերային և առևտրի վիճակագրությունները՝ փոխադարձ կապի մեջ.

6. Միջազգային նախաձեռնությունները և նոր հարցերը գենդերային վիճակագրության ոլորտում.

7. Ձեռներեցության վիճակագրության արտադրությունը գենդերային հեռանկարների տեսանկյունից.

8. Այցելություն գենդերային վիճակագրությունը, դրա նկատմամբ մոտեցումների կրոնական, գենդերային և հոգևոր բազմազանությունը. Շվեյցարիայի ֆեդերալ վիճակագրական գրասենյակ.

Հաջորդող եռօրյա աշխատաժողովի ծրագրի շրջանակում ներկայացվել են հետևյալ թեմաները.

1. Գենդերային վիճակագրության օգտագործումը քաղաքականության մշակման և մշտադիտարկման կարևորագույն նախապայման.

2. Համագործակցության ամրապնդումը՝ առավել լավ գենդերային վիճակագրության պայման. առկա դժվարությունները, առաջավոր փորձի վրա հիմնված հնարավոր լուծումները՝

գենդերային հավասարության համայնքային ինտերակտիվ քարտեզների կիրառումը, գիտական սլէմները որպես գենդերային վիճակագրության ներկայացման նոր կոնցեպտ.

3. Գենդերային ինքնության վիճակագրական չափումը՝ փորձնական հետազոտության շրջանակում սեռի և գենդերի վերաբերյալ հարցադրումների թեսթավորումը, զգայուն հարցերի մեթոդաբանության առանձնահատկությունները սեռային կողմնորոշման և գենդերի ինքնագնահատման հարցերի շրջանակում.

4. Գենդերային վիճակագրության աջակցության և առաջմղման ինստիտուցիոնալ մեխանիզմները՝ գենդերային վիճակագրության բացերի վերհանումը ազգային վիճակագրական համակարգերում, ինստիտուցիոնալ և օրենսդրական մեխանիզմները.

5. Գենդերային վիճակագրության ոլորտում հրատապ խնդիրները և միջազգային նախաձեռնությունները՝ չվարձատրվող խնամքի և տնային աշխատանքի վիճակագրական գնահատում՝ գենդերային խնդիրների համատեքստում.

6. Գենդերային վիճակագրության գերակայությունները ՄԱԿ-ի ԵՏՀ տարածաշրջանում:

Աշխատաժողովի և աշխատանքային նստաշրջանի մասնակիցները ներկայացրեցին օրակարգի հարցերից բխող գենդերային ան/հավասարության վիճակագրության ազգային փորձերը, առկա մարտահրավերները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները:

ՄԱԿ-ի ԵՏՀ գենդերային վիճակագրության հաղորդակցության հարցերով զբաղվող թեմատիկ աշխատանքային խմբի գործունեության արդյունքների շրջանակում առանցքային քննարկումների առարկա դարձան տվյալներ արտադրող-սպառող համագործակցության հաջողված փորձերի ներկայացումը: Թեմայի շրջանակում նախատեսված էր նաև խմբային գործնական աշխատանք՝ ամրապնդելու տեղեկատվության հիմնական շահառուների և սպառողների հետ համագործակցելու, արտադրված վիճակագրությունը լավագույնս ներկայացնելու մասնակիցների կարողությունները:

Շվեյցարիայի ֆեդերալ վիճակագրական գրասենյակի գործունեության օրինակով ներկայացվեց Ձեռներեցության գենդերային վիճակագրության միջազգային մեթոդաբանությունն իր ուժեղ և թույլ կողմերով: Թեմայի շրջանակում իր ազգային փորձը ներկայացրեց նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի պատվիրակությունը՝ հիմնված տնային տնտեսությունների, կազմակերպությունների հետազոտությունների, բիզնես ռեգիստրի և այլ վարչական ռեգիստրների տվյալների վրա:

ՄԱԿ-ի Կանանց ներկայացուցիչը հանգամանորեն անդրադարձավ ԿԶՆ 5.5.1(b) ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանական առանձնահատկություններին՝ հիմնված շուրջ 25 երկրների տեղական ինքնակառավարման համակարգերի իրավական փաստաթղթերի ուսումնասիրության վրա, ներկայացվեցին տվյալների հավաքման և ցուցանիշի հաշվարկման աշխատանքների դժվարությունները, մոտեցումների ներդաշնակեցման կարևորությունը: Ըստ այդմ՝ աշխատաժողովը պայմանականորեն ընդունվեց որպես հետադարձ կապի հարթակ՝ քննարկելու 2018թ. մեկնարկած տվյալների հավաքման առաջին փուլի ընթացքում առաջացած մարտահրավերները՝ նպատակ ունենալով շարունակաբար բարելավել ցուցանիշի հավաքման հետագա փուլերը:

Ներկայացվեցին Ֆինլանդիայի վիճակագրական գրասենյակի կողմից իրականացված Գենդերային հավասարության բարոմետր-հետազոտության արդյունքները, որը յուրօրինակ գործիք է մշտադիտարկելու հասարակության կյանքի տարբեր ոլորտներում գենդերային

իրավահավասարության վերաբերյալ կարծիքների, մոտեցումների և փորձի զարգացումները վերջին 20 տարիների ընթացքում:

Աշխատանքային նստաշրջանը եզրափակվեց ԵՏՀ երկրներում գենդերային ան/հավասարության վիճակագրության կատարելագործման ուղղությամբ 2020թ. աշխատանքային հանդիպումների օրակարգում ներառվելիք թեմաների շրջանակի հստակեցմամբ՝ հաշվի առնելով մասնակից երկրների կարիքները և առհասարակ՝ ոլորտի առաջնահերթությունները, առանձնակի արդիականություն և քանակական գնահատման կարևորություն ներկայացնող թեմաները: Մասնավորապես, այդպիսիք են.

1. Գենդերային վիճակագրության տարածումը և հաղորդակցումը.
2. Տեղեկատվության սպառողների շրջանում գենդերային վիճակագրության գրագիտության բարելավումը և իրազեկվածության բարձրացումը.
3. Քաղաքականության մշակման և մշտադիտարկման նպատակով գենդերային վիճակագրության օգտագործումը.
4. Գենդերային վիճակագրությունը և աշխարհատարածական տեղեկատվությունը.
5. Գենդերը և կլիմայական փոփոխությունները.
6. Պաշտոնական վիճակագրության շրջանակում սեռական կողմնորոշման վիճակագրական չափումը.
7. Տնտեսական իրավունքների և հնարավորությունների հզորացումը և տնային տնտեսություններում որոշումների կայացման լիազորությունների բաշխումը.
8. ԿԶՆ-2030թ. օրակարգի իրագործումը գենդերային հարցերի համատեքստում:

- **Արդյունքները**

Աշխատաժողովը և աշխատանքային նստաշրջանն արժեքավոր էին որոշակիորեն ընդհանուր անցյալ և անցումային ժամանակաշրջանին բնորոշ նմանատիպ դժվարություններ ունեցող ԱՊՀ տարածաշրջանի երկրների, Վրաստանի, մերձբալթյան երկրների, ինչպես նաև զարգացման տարբեր փուլերում գտնվող այլ երկրների գենդերային վիճակագրության ասպարեզում հարուստ փորձի, մարտահրավերների և քաղված դասերի ներկայացումների, քննարկումների հիման վրա ընդլայնելու գիտելիքների շրջանակը՝ երկրում իրականացվող գենդերային վիճակագրության կատարելագործմանը ծառայեցնելու տեսանկյունից:

Մասնակցությունն աշխատաժողովին և աշխատանքային նստաշրջանին հնարավորություն ընձեռեցին հասարակությունների զարգացման և համընդհանուր նոր մարտահրավերների լույսի ներքո.

ա. գնահատելու Հայաստանում գենդերային վիճակագրության ասպարեզում առկա բացերը.

բ. այլոց փորձով ուրվագծելու խնդիրների լուծման ուղիները.

գ. հստակեցնելու ոլորտի կատարելագործման այժմեական ուղղությունները՝ երկրի կարիքներին, այդ թվում Կայուն զարգացման նպատակների 2030թ. օրակարգի խնդիրների շրջանակում, և ժամանակի պահանջներին համահունչ մոնիթորինգային ցուցանիշներ ապահովելու տեսանկյունից,

դ. ուրվագծելու կարճաժամկետ և միջնաժամկետ գործողությունների թիրախները՝ փաստերի վրա հիմնված, գործունակ քաղաքականություն մշակելու նպատակով՝ հաշվի առնելով նաև այն

կարևոր հանգամանքը, որ գենդերային քաղաքականության շրջանակը չափազանց ընդգրկուն է և չի սահմանափակվում մի ոլորտով:

- **Նշումներ**

Հանդիպումներին մասնակցում էին ավելի քան 33 երկրների վիճակագրական ազգային գրասենյակների գենդերային վիճակագրության ազգային փորձագետներ, շահառու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ՄԱԿ-ի ԵՏՀ-ից, վիճակագրության բաժնից (UNSD), առևտրի և զարգացման համաժողովից (UNCTAD), կանանց (UN Women) կազմակերպությունից, մանկական հիմնադրամից (UNICEF), բնակչության հիմնադրամից (UNFPA), Եվրոստատից, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունից (OECD), Կանանց զարգացման միջազգային գործակալությունից, Համաշխարհային բանկի խմբից և ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեից:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել են ՄԱԿ-ի ԵՏՀ կողմից:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյան